Թարգմանություն *անգլերենից*

Վավերացված թարգմանություն սերբերենից անգլերեն

/Ձինանշան/

ՍԵՐԲԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ, ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Համարը՝ 351-02-00294/2017-07
Ամսաթիվը՝ 28.03.2017թ.
Բելգրադ

Համաձայն Պետական Կառավարման մասին օրենքի 23-րդ հոդվածի (Սերբիայի Հանրապետության Պաշտոնական Թերթ, №79/2005, 101/2007, 95/2010), և Նախարարությունների մասին օրենքի 6-րդ հոդվածի (Սերբիայի Հանրապետության Պաշտոնական Թերթ, №44/2014), Պլանավորման և շինարարության մասին օրենքի 126-րդ հոդվածի և 150-րդ հոդվածի 4-րդ կետի (Սերբիայի Հանրապետության Պաշտոնական Թերթ, №72/09, 81/09- փոփոխություններով, 64/10- Կենտրոնական Կոմիտեի (ԿԿ) որոշում 24/11, 121/12, 42/13 – ԿԿ որոշում, 50/13 – ԿԿ որոշում, և 98/09 – ԿԿ որոշում, 132/10 և 145/14), Ընդհանուր Վարչական Դատավարական Օրենքի 192-րդ հոդվածի (Յուգոսլավիա Դաշնային Հանրապետության Պաշտոնական Թերթ, №33/1997 և №31/2001, և Սերբիայի Հանրապետության Պաշտոնական Թերթ, №30/2010), և Նախարարության կողմից հաստատվող տեխնիկական փաստաթղթերի պատրաստման արտոնագիր ու շինարարական արտոնագիր ստանալու համար պահանջները, ինչպես նաև այդ արտոնագրերի չեղարկման պահանջները սահմանելու տեղեկատվության մեթոդի, կարգի և բովանդակության Կանոնակարգի (Սերբիայի Հանրապետության Պաշտոնական Թերթ, № 24/15), և կայացնելով որոշում համաձայն ՍԵՍՏՐԱ դոո Բեոգրադ ընկերության, հասցեն՝ Յուժնի բուլվար 1ա, Ընկերության նույնականացման համարը՝ 20081678, հարկ վճարողի նույնականացման համարը՝ 104051853, դիմումի՝ տալ քաղաքացիական ճարտարագետության ոլորտում պատասխանատու նախարարության կամ ինքնավար մարզի իրավասու մարմնի կողմից տրվել է շինարարության թույլտվություն պահանջող տեխնիկական փաստաթղթերի պատրաստման արտոնագիր, համաձայն 14.12.2016թ. թիվ 021-01-201/1/2016-02 թույլտվության, Շինարարության, տրանսպորտի և ենթակառուցվածքի նախարարությունը սույնով կայացնում է

ՈՐՈՇՈՒՄ

1. Սույնով սահմանվում է, որ ՍԵՍՏՐԱ դոո Բեոգրադ ընկերությունը, հասցեն՝ հասցեն՝ Յուժնի բուլվար 1ա, Ընկերության նույնականացման համարը՝ 20081678, կանացման համարը՝ 104051853, ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ Է քաղաքացիական ճարտարագետության ոլորտում պատասխանատու նախարարության կամ ինքնավար

ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ПЕРЕВОДЧЕСКИЕ УСЛУГИ
TRANSLATING SERVICES

մարզի իրավասու մարմնի կողմից տրվել է շինարարության թույլտվություն պահանջող տեխնիկական փաստաթղթերի պատրաստման արտոնագրի ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ, այն է՝

- P131G2՝ առաջին և երկրորդ առաջնայնության պետական ճանապարհների, ճանապարհային օբյեկտների, պետական ճանապարհների հետ միացումների և սահմանային հատումների նախագծեր,

- P131S1՝ առաջին և երկրորդ առաջնայնության պետական ճանապարհների, ճանապարհային օբյեկտների, պետական ճանապարհների հետ միացումների և սահմանային հատումների համար ճանապարհային երթևեկության և երթևեկության ազդանշանման միջոցների նախագծեր,

- P132G1՝ առաջին և երկրորդ առաջնայնության պետական ճանապարհների, ճանապարհային օբյեկտների, պետական ճանապարհների հետ միացումների և սահմանային հատումների համար ճանապարհների (կամուրջների) կառուցվածքների նախագծեր,

- P133G1՝ առաջին և երկրորդ առաջնայնության պետական ճանապարհների, ճանապարհային օբյեկտների, պետական ճանապարհների հետ միացումների և սահմանային հատումների համար ճանապարհների (թունելների) կառուցվածքների նախագծեր,

- P141G2՝ հանրային երկաթուղային ենթակառուցվածքների և միացումների համար նախագծեր,

- P141S1՝ հանրային երկաթուղային ենթակառուցվածքների և միացումների համար երթևեկության և երթևեկության ազդանշանման միջոցների նախագծեր,

- P141E1՝ հանրային երկաթուղային ենթակառուցվածքների և միացումների համար բարձր և միջին լարման էլեկտրատեղակայանքների նախագծեր,

- PI41E4՝ հանրային երկաթուղային ենթակառուցվածքների և միացումների համար էլեկտրաշարժիչ կառավարման ավտոմատ համակարգերի, չափումների և կարգավորումների նախագծեր,

- P142G1՝ հանրային երկաթուղային ենթակառուցվածքների և միացումների վրա կառույցների (կամուրջներ) կառուցվածքի նախագծեր,

- P143G1՝ հանրային երկաթուղային ենթակառուցվածքների և միացումների վրա կառույցների (թունելներ) կառուցվածքի նախագծեր,

- P150E3՝ էլեկտրոնային կապի միջոցների, այսինքն՝ միջազգային և տարածաշրջանային/հիմնական կարևորության ցանցերի, համակարգերի կամ սարքավորումների նախագծեր:

2. Սույն որոշումը փոխարինում է 01.04.2015թ. թիվ 351-02-00114/2015-07 որոշումը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Պետական Կառավարման Օրենքի 23 հոդվածի 2-րդ կետը սահմանում է, որ նախարարը ներկայացնում է Նախարարությանը, կայացնում է նորմեր և որոշումներ

վարչական և այլ անհատական հարցերով և կայացնում է այլ տեսակի որոշումներ՝ Նախարարության ոլորտի շրջանակներում:

Նախարարությունների մասին օրենքի 6-րդ հոդվածը սահմանում է Շինարարության, տրանսպորտի և ենթակառուցվածի նախարարության իրավասությունը:

Պլանավորման և շինարարության մասին օրենքի 126 հոդվածը սահմանում է, որ կառույցների շինարարության համար տեխնիկական փաստաթղթերը կարող են պատրաստվել միայն այն ընկերությունների կամ այլ իրավաբանական անձանց կամ ձեռնարկությունների կողմից, որոնք գրանցված են տեխնիկական փաստաթղթերի պատրաստման վերաբերյալ համապատասխան ռեգիստրում: Նույն հոդվածի 2-րդ կետը սահմանում է, որ շենքի շինարարության տեխնիկական փաստաթղթերը, որի համար Նախարարության կողմից տրվել է շինարարության թույլտվություն, այն է՝ ինքնավար մարզի կողմից, կարող է պատրաստվել նման կառույցների համար տեխնիկական փաստաթղթերի պատրաստման վերաբերյալ համապատասխան ռեգիստրում գրանցված ընկերության կամ իրավաբանական անձի կողմից, որը վարձել է նման տեսակի և նշանակության կառույցներիկ տեխնիկակական փաստաթղթերի պատրաստման համապատասխան մասնագիտական երաշխավորագրեր ունեցող արտոնագրված նախագծողներին: Նշված հոդվածի 3-րդ կետը ստահմանում է, որ սույն հոդվածի 2-րդ կետի իմաստով մասնագիտական երաշխավորագրեր պետք է ունենա մասնագետը, որը պատրաստել է այն տեխնիկական փաստաթղթերը, համաձայն որոնց կառուցվել է որոշակի կառույցը, մասնակցել է դրանց պատրաստմանը կամ ղեկավարմանը, մինչ դեռ նույն հոդվածի 4-րդ կետը սահմանում է, որ տվյալ հոդվածի 2-րդ կետին համապատասխանությունը սահմանվում է քաղաքացիական ճարտարագիտության ոլորտում պատասխանատու նախարարի կողմից կայացված որոշման մեջ:

Օրենքի 126-րդ հոդվածի 5-րդ կետը սահմանում է, որ համաձայն սույն հոդվածի 4-րդ կետի կայացված որոշումը հանդիսանում է վերջնական դրա տրման օրվա դրությամբ:

Ընդհանուր Վարչական Դատավարության Օրենքի 192-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է, որ վարույթի ընթացքում պարզված փաստերի հիման վրա, լիազոր մարմինը կայացնում է վարույթի առարկա հանդիսացող վարչական հարցով որոշումը, իսկ 2-րդ հոդվածը սահմանում է, որ այն դեպքում, եթե վարչական գործը քննարկվել է այլ համապատասխան մարմնի կողմից, ապա այդ մարմինը կարող է կայացնել որոշում, եթե ներկա են անդամների կեսից ավելը, և որոշումը կայացվելու է ներկա անդամների ձայների մեծամասնությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով կամ այլ նորմով սահմանված է որակավորված մեծամասնություն:

Կանոնակարգի 7-րդ հոդվածը նախատեսում է, որ համաձայն նախարարության, այն է՝ ինքնավար մարզի կողմից հաստատվող կառույցների համար տեխնիկական փաստաթղթերի պատրաստման արտոնագիր և շինարարության արտոնագիր ստանալու պահանջներին համապատասխանությունը որոշելու ընթացակարգի, Հանձնաժողովը սահմանում է, արդյոք պատասխանատու նախագծողի արտոնագրին տիրապետող աշխատակիցներն ունեն հատուկ տեսակների և նշանակության

կառույցների տեխնիկական փաստաթղթերը մշակելու համար պատշաճ երաշխավորագրեր: Սույն հոդվածի 1-ին կետի նվազագույն պահանջների կատարումը նշանակում է, որ 1) պատշաճ արտոնագրերով առնվազն երկու աշխատակից մշակել են կամ մասնակցել են մշակմանը, որպես պատասխանատու նախագծողներ, այսինքն, կատարել են տեխնիկական վերահսկում յուրաքանչյուրը առնվազն երկու հիմնական նախագծերի կամ նախագծի նկատմամբ շինարարության թույլտվության համար, կատարման նախագծի համար, կամ 2) համապատասխան արտոնագրով մեկ աշխատակից մշակել է կամ մասնակցել է մշակմանը որպես պատասխանատու նախագծող, այսինքն կատարել է արտոնագիր պահանջող առնվազն երեք հիմնական նախագծերի, շինարարության թույլտվության նախագծերի կամ Օրենքի 133-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված կառույցի յուրաքանչյուր տեսակի համապատասխան փուլի կատարման նախագծերի տեխնիկական վերահսկում, իսկ համապատասխան արտոնագրով մյուս աշխատակիցը մշակել է կամ մասնակցել է մշակմանը որպես պատասխանատու նախագծով, այսինք իրականացրել է տեխնիկական վերահսկում արտոնագիր պահանջող առնվազն մեկ հիմնական նախագծի, շինարարության արտոնագրի համար նախագծի կամ Օրենքի 133-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված կառույցի յուրաքանչյուր տեսակի համապատասխան փուլի կատարման նախագծի նկատմամբ:

Նույն Կանոնակարգի 11-րդ հոդվածը սահմանում է, որ արտոնագիրը կարող է չեղարկվել, եթե հետագա ստուգումը ցույց է տալիս, որ ընկերությունը կամ այլ իրավաբանական անձը այլևս չի համապատասխանում այն պահանջներին, համաձայն որոնց տրվել է արտոնագիրը, կամ այն դեպքում, եթե հետագա ստուգումները ցույց են տալիս, որ արտոնագիրը տրվել է կեղծ կամ անստույգ տվյալների հիման վրա:

2017թ. մարտի 13-ին ՍԵՍՐԱ դոո Բեոգրադ ընկերությունը, հասցեն՝ Յուժնի բուլվար 1ա, Ընկերության նույնականացման համարը՝ 20081678, հարկ վճարողի նույնականացման համարը՝ 104051853, դիմել է Նախարարությանը քաղաքացիական ճարտարագիտության համար պատասխանատու նախարարության կամ ինքնավար մարզի իրավասու մարմնի կողմից տրվող շինարարության թույլտվություն պահանջող շենքերի համար տեխնիկական փաստաթղթեր պատրաստելու արտոնագիր ստանալու համար:

Արտոնագիր ստանալու մասին դիմումին կից ներկայացվել են Պլանավորման և շինարարության մասին օրենքի 126 հոդվածով (Սերբիայի Հանրապետության Պաշտոնական Թերթ, №72/2009, 81/2009՝ փոփոխություններով, 64/2010՝ ԿԿ որոշում, 24/2011, 121/2012, 42/2013՝ ԿԿ որոշում և 98/2013՝ որոշում) և Նախարարության կողմից հաստատվող տեխնիկական փաստաթղթերի պատրաստման արտոնագրի ու շինարարական արտոնագիր ստանալու համար պահանջները, ինչպես նաև այդ արտոնագրերի չեղարկման պահանջները սահմանելու տեղեկատվության մեթոդի, կարգի և բովանդակության Կանոնակարգի 4-րդ հոդվածով և 9-րդ հոդվածով (Սերբիայի Հանրապետության Պաշտոնական Թերթ, № 24/15) նախատեսված փաստաթղթերը:

Նախարարի կողմից ձևավորված փորձագիտական հանձնաժողովի 28.03.2017թ կայացած նիստի ընթացքում սահմանվել է, որ դիմողը համապատասխանում է համաձայն 1-ին կետի հիշյալ արտոնագրերը սանալու պահանջներին՝ Պլանավորման և

շինարարության մասին օրենքի 126-րդ հոդվածի և Նախարարության կողմից հաստատվող տեխնիկական փաստաթղթերի պատրաստման արտոնագրի ու շինարարական արտոնագիր ստանալու համար պահանջները, ինչպես նաև այդ արտոնագրերի չեղարկման պահանջները սահմանելու տեղեկատվության մեթոդի, կարգի և բովանդակության Կանոնակարգի 7-րդ հոդվածի, 9-րդ հոդվածի և 11-րդ հոդվածի դրույթների իմաստով:

Կատարվել են արտոնագրի հետևյալ պահանջները՝

P131G2՝ առաջին և երկրորդ առաջնայնության պետական ճանապարհների, ճանապարհային օբյեկտների, պետական ճանապարհների հետ միացումների և սահմանային հատումների նախագծեր՝ համաձայն Դրազան Միլիչի մեկ երաշխավորագրի (312 E503 07), Իվանա Ստեվանովիչի երկու երաշխավորագրերի (315 G376 08) և Տոմիսլավ Միլիչնիչի մեկ երաշխավորագրի (315 J742 11).

P131S1՝ առաջին և երկրորդ առաջնայնության պետական ճանապարհների, ճանապարհային օբյեկտների, պետական ճանապարհների հետ միացումների և սահմանային հատումների համար ճանապարհային երթևեկության և երթևեկության ազդանշանման միջոցների նախագծեր՝ համաձայն Դանիել Վուցկովիչի երեք երաշխավորագրերի (370 G482 08) և Ալեքսանդար Տրիֆունովիչի երեք երաշխավորագրերի (370 Л508 12).

P132G1՝ առաջին և երկրորդ առաջնայնության պետական ճանապարհների, ճանապարհային օբյեկտների, պետական ճանապարհների հետ միացումների և սահմանային հատումների համար ճանապարհների (կամուրջների) կառուցվածքների նախագծեր՝ համաձայն Ստեվան Շիյանի չորս երաշխավորագրերի (310 4843 03) և Զորան Յոնիչի երեք երաշխավորագրերի (310 H054 09), և Դրազան միլիչի երաշխավորագրերի (370 E503 07), և Սրդան Սպասոյեվիչի երաշխավորագրերի (310 L049 12).

P133G1՝ առաջին և երկրորդ առաջնայնության պետական ճանապարհների, ճանապարհային օբյեկտների, պետական ճանապարհների հետ միացումների և սահմանային հատումների համար ճանապարհների (թունելների) կառուցվածքների նախագծեր՝ համաձայն Վլադիմիր Յովանովիչի վեց երաշխավորագրերի (310 3007 03) և Յովո Կովացեվիչի մեկ երաշխավորագրի (310 H054 09).

P141G2՝ հանրային երկաթուղային ենթակառուցվածքների և միացումների համար նախագծեր՝ համաձայն Անդրիյանա Մլադենովիկի յոթ երաշխավորագրերի (315 2824 03), Տատյանա Սիմիկի երեք երաշխավորագրերի (315 3662 03), Դրազան Միլիչի երեք երաշխավորագրերի (312 E503 07), Լյիլյանա Միլիչ Մարկովիկի մեկ երաշխավորագրի (315 3662 03) և Տոմիսլավ Միլիչնիչի մեկ երաշխավորագրի (315 J742 11).

P141S1՝ հանրային երկաթուղային ենթակառուցվածքների և միացումների համար երթևեկության և երթևեկության ազդանշանման միջոցների նախագծեր՝ համաձայն Դանիել Վուցկովիչի մեկ երաշխավորագրի (370 G482 08) և Ալեքսանդար Տրիֆունովիչի երեք երաշխավորագրերի (370 L508 12).

P141E1՝ հանրային երկաթուղային ենթակառուցվածքների և միացումների համար բարձր և միջին լարման էլեկտրատեղակայանքների նախագծեր՝ համաձայն Միլոս

Պոպովիկի մեկ երաշխավորագրի (351 O852 16) և Լյուբիկա Յակովիկի չոր երաշխավորագրերի (351 N017 14).

PI41E4՝ հանրային երկաթուղային ենթակառուցվածքների և միացումների համար էլեկտրաշարժիչ կառավարման ավտոմատ համակարգերի, չափումների և կարգավորումների նախագծեր՝ համաձայն Իվան Ռիստիչի երկու երաշխավորագրերի (352 7938 04), Միլուտին Պետրովիչի չորս երաշխավորագրերի (352 E335 07) և Մարիյա Դուշանկա Ստեֆանովիչ (353 0747 03).

P142G1՝ հանրային երկաթուղային ենթակառուցվածքների և միացումների վրա կառույցների (կամուրջներ) կառուցվածքի նախագծեր՝ համաձայն Ստեվան Շիյանի վեց երաշխավորագրերի (310 4843 03), Զորան Յոնիչի մեկ երաշխավորագրի (310 H 0574 09) և Դրագան Միլիչի չոր երաշխավորագրերի (312 E503 07).

P143G1՝ հանրային երկաթուղային ենթակառուցվածքների և միացումների վրա կառույցների (թունելներ) կառուցվածքի նախագծեր՝ համաձայն Վալդիմիր Յովանովիչի ութ երաշխավորագրերի (310 3007 03), Դրագան Միլիչի մեկ երաշխավորագրի (312 E503 07), Յովո Կովացևիչի երաշխավորագրի (310 H054 09) և Սրդան Սպասոյեվիչի մեկ երաշխավորագրի (310 L049 12).

P150E3՝ հեռահաղորդակցության ցանցերի և հեռահաղորդակցության միջոցների համակարգերի համար, այսինքն՝ միջազգային և տարածաշրջանային կարևորության ցանցերի, համակարգերի կամ սարքավորումների նախագծեր՝ համաձայն Իվան Ռիստիչի մեկ երաշխավորագրի (352 7938 04), Միլուտին Պետրովիչի վեց երաշխավորագրերի (352 E335 07) և Մարիյա Դուշանկա Ստեֆանովիչի չոր երաշխավորագրերի (353 0747 03):

Համաձայն վերագրյալի և փորձագիտական հանձնաժողովի առաջարկով, ինչպես նաև համաձայն Ընդհանուր Վարչական Դատավարական Օրենքի 192 հոդվածի, կայացվել է վերահիշյալ որոշումը:

Տրվել է վճար՝ 22.750,00 ՍԴ (քսաներկու հազար յոթ հարյուր հիսուն սերբական դինար):

Իրավական երաշխավորություն. Սույն որոշումը վերջնական է վարչական ընթացակարգում և չի կարող բողոքարկվել: Կողմը կարող է նախաձեռնել վարչական վեճ՝ ներկայացնելով դիմում Սերբիայի Վարչական Դատարանին, սույն որոշումը ստանալուց 30 օրվա ընթացքում:

Պետական քարտուղար,
Իմրե Կերի [ստորագրություն]
[Կլոր կնիք՝ Սերբիայի Հանրապետություն, Շինարարության, տրանսպորտի և ենթակառուցվածքի նախարարություն]

Ներկայացնել՝
- Դիմողին
- Իրավասու տեսչությանը
- Արխիվին

ԱՊՈՍՏԻԼ /1961 թվականի հոկտեմբերի 5-ի Հաագայի Կոնվենցիա/	
1. Երկիրը՝ ՍԵՐԲԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ	
Սույն պետական փաստաթուղթը՝ Որոշումը	
2. ստորագրվել է ԻՄՐԵ ԿԵՐԻԻ կողմից	
3. ով գործում է որպես պետական քարտուղար	
4. կրում է Սերբիայի Հանրապետության Շինարարության, տրանսպորտի և ենթակառուցվածքի նախարարության կնիքը/դրոշմը	
Վավերացված է	
5. Բելգրադում	6. 27.07.2019թ-ին
7. Ում կողմից (մարմնի անվանումը)՝ Բելգրադում առաջին հիմնական դատարան	
8. Գրանցման N. Ov-H-10825/2019	
9. Կնիք/Դրոշմ՝ Սերբիայի Հանրապետություն, Առաջին հիմնական դատարան Բելգրադում, Բելգրադ	10. Ստորագրություն՝ /ստորագրությունն անընթեռնելի է/

--- թարգմանության ավարտ ---

Սույնով հաստատվում է, որ սույն փաստաթուղթը ճիշտ թարգմանվել է սերբերենից անգլերեն Սերբիայի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից նշանակված Դատարանի անգլերեն լեզվի երդվյալ թարգմանչի կողմից, Բելգրադում:
Իմ լիազորություններն անժամկետ են
Որոշում թիվ 740-06-199/95-18
Ամսաթիվը՝ 23.07.2019թ.

Դատարանի անգլերեն լեզվի երդվյալ թարգմանիչ
Բոյան Ռադիչ
Վլադիմիրա Ռոլովիցա 55, Բելգրադ
/Առկա է կլոր կնիք/

Անգլերենից հայերեն թարգմանեց արտոնագրված թարգմանիչ **Քրիստինա Քյոսաբաբյանը**
(Տրված է վկայական №23 Արդարադատության Նախարարության կողմից 13.02.2015թ.)
Երկու հազար տասնինը թվականի **հուլիսի քսաներեքին**

ALEX-R

ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ПЕРЕВОДЧЕСКИЕ УСЛУГИ
TRANSLATING SERVICES